

Ու գլուեցիք, համբուրեցիք դուք զանոնք
 Իրբեւ որդիք մարտիրոսաց, վրկայից
 Որ ֆրիստոսի համար արին թափեցին,
 Անգէտ միմեանց, զըտանք զիրար ու այլ եւս
 Ո՛չ Սիմէոն մեզ անծանօթ ե ոչ ձեզ
 Մարտիրոս ցեղն անոր՝ զոր շատ կը սիրէք, —
 Բարեաւ մընաւ, ո՞վ անձկալիզ Սիմէոն,
 Ողջոյնն է հայ ուխտաւորին, ե եթէ
 Այնքան ժըպիտ ու սէր ունիս կաթողին
 Քեզ անծանօթ ժողովուրդին՝ յիշէ՛ հէք
 Զարմիզ ցաւերն ու սուրբ երկիրն աւերակ,
 Լոկ աղաչանք մը մեզ համար, ս՛հ բաւ է
 Որ ծաթէ շողն ազատութեան ու սիրոյ:

Հ. ԵՂՈՒ ՓԵՏԻՍԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Հայ Գաւառքը (միայլ ու պայծառ պատ-
 կերներ): Գրեց Յակոբ Խոհարարեանմ.

Նիւ Եօթ 1924, էջ ԻԻ

Մին է այն հատորիկներէն՝ որ ԼԵՍ
 տեսան ու կը տեսնեն դեռ, ապագայ հա-
 յութեան աւանդելու մեքտարաբախտ ազ-
 գութեան՝ արեան ե արցունքի օրերն ու
 զոհերը:

Գրքին տիտղոսը վսեմ է, ինչպէս հոն
 պատմուածները: Հեղինակը «հայ հաւատ-
 ք»-ի քով կը փակագծէ երկու խորհրդաւոր
 ամականներ, «մոայլ» ու «պայծառ»
 անուանելով իր հոն զրաժ պատկերները:
 Ածականներու հակասութիւն մ'է կար-
 ծես, ե սակայն շատ լաւ կը պատկերէ
 զժողային գիշերները, սուգի ժամերը, ա-
 տելութեան հրդեհը, ինկած զոհերը ու այդ
 մութ ու տխուր համայնապատկերին քով
 հայտնի հաւատքը՝ որ կը ճանախէ հոն
 ինչպէս պայծառ արեքը:

Վարդաններու ե վարդենի Շուշաններու
 նահատակութիւնն է դարձեալ, հաւատքի
 յաղթանակը:

Խնդակցութիւններ Պ. հեղինակին. նա
 հայ սերնդեան կը ցուցնէ թաշը որ միակ
 նեցուկն է ե փրկութիւնը: Հ. Ե. Փ.

ԱՅԼԵՒԱՅԼԻՔ

ՏԻՊՈՒՏԱՌԷՆ ՄՈՒՅՈՒՄՏ ԷՃ ՄԸ

(Շար. տես Բազմավէպ 1924, էջ 280)

Իթէ մէկը ուզէ հայ տպագրութեան ե
 հայ տառերու կազմաւորութեան վրայ
 փոքր ի շատէ զաղափար մը կազմել,
 պիտի տեսնէ անմիջապէս, որ անոնց ամ-
 րողջութիւնը նախապէս 140 տառերու
 մէջ միայն կ'ամփոփուէր, հետեեալ կեր-
 պով. 38 զլատատառ, 38 բոլորագիր, 20
 ծոցագիր, 8 զուգագիր, 9 լեցուն տառեր,
 10 թուագիր, 11 կէտանիշներ ե 3 քա-
 ռեակ, տողափակ (քատրա) ե բառանջատ
 (էսրաս): Բայց հետզհետէ մեր տպագրիչ-
 ներէն շատեր, իրենց ալ թերեւ ահաբեկե-
 լով մեր տառերու քիչ մ'անսովոր թան-
 ձրութենէն, քանիցս փորձեր էին մատե-
 նագրիւններու ե Ս. Գրոց տպագրութեան
 մէջ յաճախակի զործածուած բառերու կամ
 քերականական յօդերու ե շաղկապներու
 մէկ մեծագոյն մասը կրճատելով կամ ա-
 նոնց տեղ ինչ ինչ աղագրեալ նոր տառեր
 աւելցնելով՝ անոնց թիւը մինչեւ 300ի
 բարձրացնել, ինչ որ կրնանք տեսնել մեր

Նախկին հրատարակութեանց մէջ, որք թէ և նոյն շրջանին յաջողած էին մասամբ իրենց օգտակարութիւնը ունենալու, սակայն աշխարհիկ լեզուն և գրականութիւնը ընդհանրաւորէն ետք այլևս կորնացողին իրենց գոյութեան իրաւունքը և ոչնչացան բոլորովին, վասն զի իր սղագրութեան մասին մատուցած օգտակարութենէն աւելի դժուարութիւն կը պատճառէր գրաշարին արագաշարութեանը: Այս առթիւ չմոռնամ աւելցնելու նաև որ մեր վէնեստիկի և վիէննայի Միթթարեան միաբանութեանց պատուարժան հայրերն անգամ, որոց միայն կը պարտինք հայ տպագրութեան արուեստին զարգացումը, պահ մը անոնց օրինակին հետեւելով՝ իրենք ալ ուրիշ նորարար կրճատումներ աւելցուցին նոյն իսկ աշխարհիկ լեզուի նախօրեակին և մինչև անգամ մեր խնդրոյ նիւթ բնել առաջարկած և ստոին վրայ կեդրոնացրէնելով իրենց ուշադրութիւնը, անոր երեք ակաւաններուն երկուքը ֆրանսիայի մէկ ակադամով փորձած էին և կարգացնելու մեզի, ինչ որ չյաջողեցաւ բոլորովին:

Ասոնց ամէնքը սեւեց մինչև 18րդ դարու կէսը, որմէ ետք ամէնքն ալ զրեթէ գործածութենէ դադրելով՝ մեր օրերուն մնացին միայն նոյն 140 տառերու գործածութիւնը, չորս տարիներով և առանց ուրիշ նոր փոփոխութիւն մը կրելու շարունակեցինք անխափան, բայց երբ 1900է ասդին, ինչպէս Թուրքիոյ մէջ ամենուրեք, նոյնպէս մեր մէջ, պարբերական թերթեր և օրաթերթեր աւելնալով՝ իրարմէ աւելի կանխու և շուտ հրատարակելու մրցակցութիւն մը առաջ եկաւ, գրաշարներու դերութիւն մը մատուցած ըլլալու ակնկալութեամբ. նոր փորձ մ'ալ ըրինք մեր խելօք և բարեմիտ հօճային արագիւր մը կտուցը և ոտքերը կարճեցնելով՝ հաւի մը նմանեցնելու գոհմանակութիւնը վայելելուն պէս, մենք ալ մեր տառերու ոմանց զուրիւր և ոմանց ալ (պոչաւորներու) զուրս ցցուած մասերը պակսեցնելով՝ նոյն ծոցագիրերը, զուգագիրերը և լեցուն տառերը գործածելու հարկէն միանգամ ընդ միշտ

ազատեցանք, առանց զգալու թէ մի միայն գրաշարներու աշխատութեան մասամբ այս դերացումը տուած ըլլալու յուսախարութեամբ՝ հայ տառերու ինքնատիպ գեղեցկութիւնը և հարազատութիւնը կորսնցնելու վտանգին կ'ենթարկենք, և անուղակի թոյլատու կ'ըլլանք նաև անոնց՝ որ փոխանակ բառերը չորս կամ առ առաւելն վեց Բուկո բառանջատներով (խորատ) իւրարմէ հեռու շարելու, քառեակ (ֆուտրա) մը հեռաւորութիւն ունեցող բառերով տղեր լեցնելու ամենատեղ վարժութեան, ինչ որ ներկայիս սովորական դարձած բան մ'է մեր թրքահայ ամէն հրատարակութեանց մէջ, ի հեճուկս հայ մամուլի վաղեմի աշխատաւորներուն:

Ահա ճիշդ այս մտածումով և այս պատճառաւ էր որ Տէտէեան իր վերջին անգամ Բարիզ ուղևորութեանը, հոն եւրոպացի գրածուիչ մասնագէտներու օժանդակութեամբ իր տպարանին համար 11 Բուկոյի վրայ մեծաքանակ նոր տառեր ձուլել տուաւ, որոնք նախկին տառերութեանը նման ու ծաւալին '՝ ը կորսնցնելէ զատ, անոնց իրարմէ մէկ Բուկոյի հեռաւորութիւնն ալ կէս Բուկոյի վերածեց, ինչպէս նաև չորս Բուկոյի աւելի բառանջատներու գործածութիւնն ալ գրեթէ բոլորովին ֆրանսիացի, առանց սակայն ո' և է նշանախեց մ'իսկ պակսեցնելու կամ աւելցնելու անոնց ձևի և կազմածի նախնական իրաւունքէն: Եւ գիտէ՞ք ինչ եղաւ արդիւնքը. մի և նոյն Բուկոյի վրայ և մի և նոյն տառերով նախապէս 16 էջ պարունակող պրակ մը, այս վերջին նորածոյ տառերով և մի և նոյն չափի վրայ, 12 էջի մէջ ամփոփուեցաւ. որով չորս պրակնոց զբոյսկէ մը մէկ պրակ պակսեցնելու առաւելութենէն օգտուելով՝ անոր համար վճարած թղթի, գրաշարի, տպագրիչի և թարգմանչի ծախուց գումարները շահեցաւ, որք տարուան մը մէջ նոյն երեք գրաշարներով և մի և նոյն վճարումներով 16 պրակնոց եօթն հատոր գիրք ձրարար տպագրած ըլլալու առաւելութիւնը կ'ընծայէ իրեն, անշուշտ տառերը աւելի վա-

յելուչ և միաչափ ըլլալու պայմանաւ Որինակ Հագոր և մէկ ցիւրններու թարգմանութիւնը և հետագայ վէպերու թարգմանութիւնները:

Իրաւ է թէ տպագրութեան արուեստին նախապատմականը ընել չէր մեր նպատակը, սակայն ասոնց յիշելով ուզեցի ապացուցանել, թէ հայ տպագրութիւնը իր նախօրեականէն սկսեալ մինչև մեր օրերը, շարունակ զերծ չէ մնացած փոփոխութիւն կրելէ, մանաւանդ զանազան ուղղութեամբ սղագրութիւնէ օգտուելու փորձեր ընելէ, Այժմ պիտի ջանամ ապացուցանել թէ անոնց ամէնքն ալ հաւասարապէս անկեղծութեամբ օգտակարութիւնը ունեցած են թէ ոչ:

Սակայն մեր առաջադրած բուն խնդրոյն ձեռնարկելէ առաջ չմոռնամ աւելցնելու նաև, թէ իրօք մեր հայ տառերու մէջ, ըլլայ սեպհական թէ օտարամուտ, կան մի քանի տառեր, որք բաւական աչքատու թերութիւն մը կը պարունակեն իրենց մէջ և ստուգելու լուրջ սրբագրութեան մը կը կարօտին: Կը ցաւիմ ըսել որ այս վերջինները, իրենց ստեղծագործութեան թուականէն սկսեալ հազարաւոր փոփոխութիւններ կրելով հանդերձ, ցարդ ոչ ոք ուշադրութիւն մատուցած է անոր:

Այդ տառերն են հետեւեալները. առ, քր, գղ, զղ, լլ, ուս, չջ, որք տպագրութեան մէջ իրարու համաչափ և համաձև ըլլալով՝ մէյմէկ աննշան և նուրբ գիծերով միայն կը տարբերին իրարմէ և յաճախ կը դժուարացնեն ընթերցումը, ոչ միայն նորաժարք, սղայ կամ ծեր ընթերցողի մը՝ այլ նաև մեր ամենէն ներհուն և բառագէտ բանասէրի մ'անգամ: Ինչպէս յայտնի է՝ ասոնց կ'որոշուին իրենց նորութեանը մէջ միայն, և քանի մ'անգամներ տպագրուելէ ետք՝ նոյն ինք տպագրողն անգամ երբեմն իր գիտակցութիւնը կը կորսնցնէ, մանաւանդ նորամուտ, օտար և և անձանօթ բառի մը հանդիպած առնել:

Չեմ յուսար թէ ասոր դարման մը տանիլ անհնար ըլլայ բոլորովին, և կը կարծեմ նաև որ անոնց զոյգերէն մէկուն

յետակողմէն միայն, առանց տառերուն ինքնութիւնը վտանգելու, որոշ կորութիւն մը տրուի կամ հակառակէն աննշան պոչ մ'աւելցուի՝ ինքնին կ'անհետանայ այդ անտեղութիւնը. իսկ զալով չառ և ուս տառերուն, այդ մասին առանձինն պիտի խօսինք ներկայիս, իբրև զլիաւոր դըրդագատմառ մեր սոյն հիմնաւոր պրպըտումին:

Քանիցս փորձած, հաշուած ու համուշուած եմ թէ մեր հայ օրաթերթերու, ինչպէս նաև ուրիշ բազմաթիւ աշխարհիկ լեզուի հրատարակութեանց 25-28 տառ պարունակող 180 տողերուն մէջ առաւելին 4500 տառ միայն գոյութիւն կ'ունենայ, որոց 700ը, այսինքն՝ յըլիւտրապէս չառ ու տառը ըլլալով՝ մնացեալ տառերու մէջ իբրև ծոցազիր 2-300 անգամ գործածուած ի և յ տառերն են միայն, ինչպէս նաև ասոնցմէ ետք ը, իւ, կ, և յ տառերը, որք հազիւ 100ական գործածուած են, իսկ մնացեալները 10-20 անգամ, որով ծոցազիրերու սղագրութեան մասին օգտակարութիւնը ինքնին կ'ոչընչանայ և անոնք կը մնան միայն վայելչութեան տեսակէտով իրենց ինքնատիպ կարեւորութեան դերին մէջ միշտ անփոփոխ:

Հետեւաբար, ինչպէս որ մեզի հետ շատեր ալ փորձելով և ստուգելով պիտի համոզուին, կը տեսնենք որ չառ տառը կը մնայ միայն, որ իր ամէն բառերու մէջ յաճախակի գործածութեամբ և մանաւանդ բացառիկ ծաւալովը մեր ամէն հրատարակութեանց մէջ հսկայաբար գլուխ կը բարձրացնէ, և ակամայ կը պարտաւորէ նաև զմեզ քիչ մը իրմով զբաղելու: Բայց որովհետև այս մեր հնաւանդ ոսկեղինիկ տառին ու լեզուին կամ դարաւոր այս անձեռնմխելի սեպհականութեան դպիլ և ձևի ու կազմածի մասին ո՛ր է հիմնական փոփոխութիւն մ'ընել, իրաւամբ անցաւի սրբապղծութիւն մը կը համարուի, կ'ուշեմ գիտնալ, թէ առանց այդ տառէն նշանախեց մ'իսկ պակսեցնելու, չենք կրնար արդեօք օգտագործել զայն մի և

նոյն նպատակով, Այս պատճառաւ ներկայիս կը հարկադրուիմ հարցնել աւելի ներհուն և հեղինակաւոր անձնաւորութիւններու, թէ ի՞նչ անպատեհութիւն կայ որ այդ Ձ տառը փոխանակ գէջ ու լայնափոր մարդու մը պէս, մեր նեղ ու անձուկ համրուն վրայ ուղղահայեաց կերպով ծալապատիկ նստեցնելու, եթէ զայն քիչ մ'ալ հորիզոնական կերպով (3) կանգնեցնելու փորձ մ'ընենք, գոնէ մատենագրական գրքերու, պարբերաթերթերու և օրաթերթերու համար. չէ՞ մի որ ամենէն փափկակեաց և ամենէն զօրաւոր մարդն անգամ յաճախ ծուկու, կընու և ինք իր վրայ ամփոփուելու պէտքը կը զգայ, երբ նեղ դռնէ կամ անցքէ մը ներս մտնելու կը հարկադրուի, և մանաւանդ երբ մեր հաւրաններն և ուրիշներ՝ արդիական պահանջներու գոհացում տալու համար մինչև իսկ իրենց տառերը հիմնովին փոխել և լատին տառերը իւրացնելէ չեն խուսափիր. բաց առկէ՝ եթէ այս անձնաս փոփոխութիւնն ընդունելով՝ աւելցնենք նաև մի միայն սոյն երեք փակագիրները,

ԹԵ Բ, ԹԻՐ Դ և ՈՒ Ղ

կը յուսամ թէ առանց նոյն իսկ ընթերցման կամ ընթերցողին ո՛ր և է դժուարութիւն պատճառելու, օ՞ր 30 օգտուինք անորմէ, և երբ մեր նախապէս յիշած Տէտէեան պայմաններն ալ գործադրենք՝ ապահովարար օ՞ր 50 պիտի բարձրանայ այն, և տպագրութեան ծախսը զուամբը, որ այսօր մանաւանդ ահաբեկող երևոյթ մ'առնել սկսած է, կ'սովը միայն պիտի բաւականանայ, ինչ որ գրականութեամբ զբաղողներու և հեղինակաւոր ձեռնհաս վարպետներու ուշադրութեան յանձնելէ չեմ խուսափիր բնաւ:

ՅՈՎՀ. Ս. ԱՐԻԿԵՍԸ



ԿԵՆԴԱՆՆԵՐՈՒ ԵՐԱԺՇՏԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութիւնը այնքան քաղցր, հրապուրիչ և բնական է, որ ոչ միայն բանաւոր մարդս՝ այլ և անբան անասուններն իսկ կը կախարդէ: Ամէն ոք զիտէ՝ ծիւռն երաժշտութենէ զգացուիլն. զիտէ նաեւ պատեհաբար մէջ անով իւնդալառուած խորխոր յարձակումները. ճանապարհորդը գրաստին — մանաւանդ ուղտին — երաժշտական յոժոժներով զարդարուիլն, որպէս զի անապատի երկար և միապաղաղ ճամբորդութեան դառնութիւնը անոնցմով քաղցրացնէ. նոյնպէս թովիչներու սրինգով և կամ այլ երաժշտական գործիքով օժեքը դիւթելն, կապկի և արջի պարելն և այլն ևն. Այս ամէնը արդէն հնուց ի վեր ծանօթ էր մարդկութեան:

Այժմ քաղցեաները աւելի եւս հետախուզելով կենդանիներու առ երաժշտութիւն ունեցած այս բնատուր բերումը, ոչ միայն մեծահասակ անասնոց՝ այլ և փոքրերուն և մինչև իսկ միջատներու մէջ կը նշմարեն այս բնազդը: Մեծերուն մէջ ծին՝ ոչ միայն երաժշտութիւնը կ'ախորժի՝ այլ և գործիքով տրուած նշաններն իսկ կը հասկնայ. ասոր փորձը կատարեց զաղղիացի անասնաբոյժ մը. անգամ մը արոտ մտնելով, ուր 15ի չափ ձիեր կային, սրինգով ու ջութակով փորձեց, և տեսաւ որ կտրուկ և անկապ ձայները ոչ մէկ ազդեցութիւն կ'ընէին անոնց վրայ. իսկնչ քաղցր մեղեդի մը հնչեցնելուն՝ իսկոյն ձիերը իրեն դառնալով սկսան ուշադրութեամբ դիտել զինքը: Փոքրագոյն անասուններու մէջ, կ'ըսուի թէ այն խարաղ-նազգեաց ճգնաւորիկն ալ, — Ողբին — երաժշտութիւն լսելուն, պահ մը մոռնալով իւր խտտաբեր կեանքը, իսկոյն կը սկսի պարել: Երկու աքլորիկներ, կը պատմէ մէկը, գետինը արպտելու միջոց՝ սրինգի ձայն մը լսելով իսկոյն թողուցին իրենց կարեւոր գործը, և սկսան կամաց կամաց դէպի այն դուռը մօտենալ՝ ուսկից ձայնը կու գար: